Արձանագրություն N 2.3

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի, ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի և ՀՀ Կոտայքի մարզի գ. Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 25.06.2020թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Դ. Շատվերյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Ար. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

1. Տեղեկություններ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցման և պարզաբանման մասին

(Դ. Շատվերյան)

1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Չիվայի, ՀՀ Կոտայքի մարզի գ. Ջրառատի և ՀՀ Կոտայքի մարզի գ. Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 2020 թվականի հունիսի 23-ին ստացվել է հարցում:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահող՝ _____ Դ. Շատվերյան

Անդամ՝ _____ Ռ. Եղիազարյան

_____ Գ. Գևորգյան

_____ Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ն. Հարությունյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2020 թվականի հունիսի 25-ի թիվ 2.3 որոշմամբ և հրապարակվում է

“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4

23.06.2020թ. ստացված հարցումը և դրա վերաբերյալ պարզաբանումը.

Հարցում

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով բաց մրցույթի աշխատանքային գծագրերում առկա են
- Վահան բասկետբոլի տեղադրված պատին՝ 1 կոմպլեկտ
- Բասկետբոլի մարզական վահան՝ 4 հատ
- Գնդակը նշանակետին նետելու վահանակ՝ 1 հատ

Խնդրում եմ հստակեցնել «Բասկետբոլի մարզական վահանի» տեսակը, օրինակ՝ պատին ամրացվող, շարժական, դրսում թե ներսում (դահլիճում) տեղադրվող (ՏԽ-03 գծագրում նշված է 3 հատ, սակայն ծավալաթերթում գրված է 4), վահանի չափերը:

Նույնը վերաբերում է «Վահան բասկետբոլի տեղադրված պատին» և «Գնդակը նշանակետին նետելու վահանակին»:

Պարզաբանում

Վահան բասկետբոլի տեղադրված պատին 1 կոմպլեկտ՝ կազմված է 2 հատ լրակազմ բասկետբոլի վահանից: ՏԽ-03 և ՏԽ-02 գծագրերի մեջ մակնիշված է թիվ 48 համարի տակ:

Բասկետբոլի մարզական վահան 4 հատ՝ մեկական լրակազմ վահան, պատին ամրացվող, նախատեսված մանկահասակ երեխաների մարզման համար: ՏԽ-03 և ՏԽ-02 գծագրերի մեջ մակնիշված է թիվ 49 համարի տակ և պետք է տեղակայված լինի հիմնական վահանների աջ և ձախ կողմերում՝ 2.2 մ հեռավորության վրա: Քանակը 4 հատ /Տես ՏԽ-02/:

Գնդակը նշանակետին նետելու վահանակ 1 հատ՝ 1 հատ լրակազմ վահան /համանման թիվ 49 մակնիշի բասկետբոլի մարզական վահանին/ պատին ամրացվող, նույնպես նախատեսված մանկահասակ երեխաների մարզման համար: ՏԽ-03 և ՏԽ-02 գծագրերի մեջ մակնիշված է թիվ 50 համարի տակ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նազիկ Հարությունյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլ.փոստ՝ tender1@minurban.am

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով